Խնձաւերակ, Հնդի, Սարաչիլ, Զուրմավանց, Վարզահան, Քարաւերակ, Քսանքա, Քրիստի (Քրիստափոր) Վանք, Խայէք, Ուստիկ (Օձտեղ), Կոպիս (Խուբս):

Բալախոռի հայութիւնը սոսկալի փորձութիւններից եւ դաղթերից ու պանդխտութիւններից, եթէ պահել էր իր գոյութիւնը գաւառի ազգաբնակութեան մի երրորդի չափ (1/3), դա նշանակում է, որ նա բարոյական մեծ ոյժ է ունեցել տոկալու մինչեւ քսաներորդ դարը:

Թուրքական կառավարութիւնը Հովտիկը, Բայբուրդը եւ Բալախոռը միացրած մի գաւառ է (սանջակ) համարում:

Դ.

Սպերի Հովիտը:

Ճորոխը Բալախոռն ընդունելուց յետոյ, կրկնակի մեծանում է, լայնում է եւ հուժկու սահանքով մտնում է Սպերի երկար հովիտը: Սպերի գաւառը գտնւում է արեւմուտքից՝ Բայբուրդի, հարաւից՝ Հովտիկի եւ Թորդումի, արեւելքից՝ Կիսկիմի, իսկ հիւսիսից Պոնտական Խաղտիքի մէջ. Սպերի ամբողջական հիւսիսային երկարութեամբ տարածւում է Պալխա լեռնաշղթայի շարքը. իսկ հարաւից՝ Էշէք-Սրթի, Օրթա-Գեօլ Խորտիկ, Տանձոտ, Աղաշ-Քիլիսէ,